

Շրջիկ գրադարանի այցը Կոտայքի մարզի Նաիրիի տարածաշրջան

Եղվարդի քաղաքային գրադարան

2016թ. սեպտեմբերի 16-ին Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեն Հասմիկ Ղազարյանը և Միջոցառումների կազմակերպման բաժնի վարիչ Անահիտ Մանուչարյանը Շրջիկ գրադարանով այցելեցին Կոտայքի մարզի Նաիրիի տարածաշրջանի Եղվարդի կենտրոնական քաղաքային գրադարան: Այցի նպատակը տարածաշրջանի քաղաքային և համայնքային գրադարանները (Եղվարդի քաղաքային (153 միավոր), Նոր Երզնկա (56 միավոր), Գետամեջ (55 միավոր), Արագյուղ (41 միավոր), Զովունի (41 միավոր), Քասախ (49 միավոր), Պոռոշյան (42 միավոր), Մրգաշեն (41 միավոր), Նոր Գեղի (41 միավոր) գրականությամբ համալրելն էր: Համայնքային գրադարանների աշխատակիցների հետ անցկացվեց սեմինար-խորհրդատվություն, ներկայացվեցին գրադարանների առկա խնդիրները և քննարկվեցին ոլորտին առնչվող արդիական հարցեր: